

Այ գոյնը միշտ կը մնայ եղին մէջ, և  
ամենեին վնասակար չէ : Կարագը  
կը նայ գունաւորուիլնաւ գինիի ոգի-  
քը կարագին մէջ լուծելով :

### Կաշէ Յեռացները լուալու հերու :

**Չ**երւոցն երբ՝ շատ օգտակար են  
մարդուս ձեռուըները ամառուան  
տաքութէն ու ձմեռուան ցրտութե-  
նէն պահելու համար . և որովհետեւ  
կաշիէ ձեռնոցները շատ սուղ են, ա-  
նոր համար կը նային որ աւելի ուրիշ  
նիւթերէ հիւսեն . բայց ասով ալ  
կաշի ձեռնոցները միշտ յարգի են, ո-  
րովհետեւ շատ կը դիմանան, և մար-  
դուն ձեռքը աւելի զով կը պահեն :  
Հիմա տեսնենք թէ աս ձեռնոցները  
աղտոտին նէ՝ ինչպէս լուալու է որ  
նորէն առջի փայլունութիւննին առ-  
նեն :

Այ բրդէ լաթի կտոր մը ու անուշ  
ջրի մէջ աղէկ մը թաթխէ, ու ջրէն  
հանէ ցամքեցու. ետքը հասարակ ձեր-  
մակ սապոնի կտոր մը առ, ու բրդեղէ-  
նին երկու երեսին ալ աղէկ մը քսէ :  
Հետոյ ձեռնոցներէն մէկը ձեռքդ ան-  
ցուր, ու ան լաթ-ով աղէկ մը շփէ, մա-  
նաւանդ աղտոտ տեղուանքը և ուր որ  
կ'ուզես աւելի փայլուն ընել : Սորս  
հինգ վայրկեան շփելէն ետքը՝ երբոր  
ձեռնոցը աղէկ մը կը մաքրուի՝ զգու-  
շութեամբ ձեռքիդ վրայէն հանէ,  
առանց շատ քաշքըշելու, ու գնդասե-  
զով<sup>2</sup> կամ թել մը գերձանով չուանէ  
մը կախէ շուք տեղ . յետոյ մէկալ  
ձեռնոցն ալ նոյնպէս մաքրէ ու փուէ  
որ չորնայ : Իիչ մը չորնալէն ետքը ան  
կտորն որ շատ թթվեր ես՝ կոնճմրտած  
կ'ըլայ, առաձգութին ալ կը կորսուն-  
ցընէ, այսինքն մատուըները կը քա-  
շուին կը նեղնան . աս բանիս համար  
կլոր պղտիկ գաւազաններ կ'առնես ու  
մատերուն տեղուանքը կը խոթես որ

բացուին, կամ չէ նէ ձեռքիդ վրայ  
կ'անցընես : Այ կերպով ինչուան վեց  
եօթը անգամ կը նան մաքրուիլամէն  
կաշի ձեռնոցները, մանաւանդ ձեր-  
մակներն ու դեղինները . միայն գի-  
տելու է որ քանի որ խիստ շատ չէ աղ-  
տոտած՝ ան ատենը մաքրուի :

Ինչու հայար ցուրդ առէն ածելիներուն վրա  
ինչուան որ շունչ չպաս՝ դիւրաւ չէն իրէր :

ԱԱՆ զի մանրացուցով տեսնուած  
է որ ածելիին՝ բերանը սառ կապելով  
սղոց՝ գարձեր է . ուստի շունչ մը տա-  
լուդ պէս՝ ան սառը կը հալի ու բե-  
րանը կը շտկի :

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԿՈՒԹԻՒՆ

ԱՃԽԱԲՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Փըլքէնորիս :

ՓԼՈՐԵՆՏԻԱՆ Քաղաքը, որ հիմա ի-  
տալերէն իիրենցա կամ իիրենցէ կը-  
սուի, աշխարքիս անուանի ու գեղե-  
ցիկ քաղաքներէն մէկն է : Որոշ չպիտ  
ցուիր թէ որ ատեն շինուած է . ո-  
մանք կը հաստատեն թէ հին իշրու-  
րացւոց շէնքն է, որ Հռովմայեցիք  
առին անոնցմէ : Խաքերը գոթացւոց  
ու Ո ոնդոքարտացւոց արշաւանքնե-  
րով շատ աւրուեցաւ . մեծն կարո-  
լոս նորոգեց, ու հիւպատոսական կա-  
ռավարութիւն մը հաստատեց մէջը՝  
որ չորս հարիւր տարի քշեց : Խրեք-  
տասաներորդ գարուն մէջ աս հասա-  
րակապետութիւնը աւելի կարգաւո-  
րուեցաւ ու ծաղկեցաւ . բայց 1343ի  
ներքին խովզութիւնները այնչափ շատ-  
ցան որ Կափոլիի թագաւորը կուալ-  
թերի անունով դուքսը խրկեց՝ իբր

թէ Փլորենտացւոց օգնելու համար : Վաղաքացիք տեսնելով որ անիկայ հնարքով տիրեց վրանին՝ ոտք ելան, ու զինքը քշեցին : Այսեն անցնելէն ետքը հետզհետէ զօրացաւ Անտիչի ըսուած ցեղը, և ասկէ ելան երևելի դուքսեր որ Փլորենտիան շատ ծաղկեցուցին ինչուան որ հատաւ ցեղերնին 1727ին, Գերմանիայի կայսրը 1731ին Փլորենտիայի դուքս դրաւ կարուսը՝ որ Ապանիայի թագաւորական ցեղէն էր : Այսիկայ 1735ին՝ Լափոլիի թագաւոր դրուելով թողուց Փլորենտիան Վրանցիսկոս Ատեփանոս դքսին՝ որ Կարոլոս Զ կայսեր փեսան էր ու Արիամու Ուերեզիայի էրիկ . անկէ ՚ի վեր Ուսուքանայի դքսերը Աստրիոյ կայսերական ցեղէն կ'ըլլան :

Վաղաքը Ապենինեան լեռներուն մօտ շատ զուարձալի ու բարեթեր դաշտի մը մէջ շինած է, չորս դին գեղեցիկ բլուրներով՝ գեղերով ու պալատներով զարդարուած : Արնոյ գետը քաղզին մէջէն կ'անցնի : Փողոցներուն շատը խիստ լայն ու գրեթէ բոլորն ալքարայատակ են . շէնքերը հաստատուն ու խոշոր են, բայց հին բերդերու ձեւ մը ունենալով՝ աչքի այնչափ աղուոր չեն երենար : Կատ հրապարակական շէնքեր կան մէջը իրարմէ գեղեցիկ, հարուստ ու զարդարուն . բայց ամենէն անուանիներն են՝ մէյմը Փիլենի ըսուած պալատը՝ ուր որ դուքսը կընստի, ու Աւրոպայի թագաւորական պալատներուն խիստ գեղեցիկներէն մէկն է . մէջի արձաններն ու պատկերներն ալ շատ հուշակաւոր են : Արկրորդ՝ Հին պալատ ըսուածը, որ 250 ձողաչափ երկայն ձամբով մը գետնին տակէն հաղորդակցութիւն ունի առջինին հետ, ու ձարտարապետութեր կողմանէ անկէ վար չմնար : Արրորդ՝ Փլորենտիան Անդաբանը, որուն մէջ գրեթէ անհամար հին և նոր արձաններ ու պատկերներ կան, և կրնայ ըսուել թէ Աւրոպայի մէջ մէկ հատիկ է : Չորրորդ՝ Հանական

պատճենաւունքն Անդաբանը, որ սքանչելի հաւաքմունք մը ունի մեղրամոմէ շինած անդամազնական բաներու : Ուրիշ շատ հոյակապ շէնքեր ու պալատներ ալ կան որ հօս մէկիկ մէկիկ ստորագրելը շատ երկայն կ'ըլլայ . ինչպէս նաև անթիւ ուսումնական ու բարեպաշտական տեղուանք . խիստ անուանի է նաև Պապը ըսուած պարտէ զը, որ քաղաքացւոց գլխաւոր զբօսարանն է : Ակեղեցիները շատ գեղեցիկ ու փառահեղին . բայց ամենէն երեկելին մայր եկեղեցին է, որուն վրայ քիչ մը աւելի խօսինք :

Արբոր օտարական մը կը տեսնէ ասեկեղեցւոյն ահաւոր շէնքը ասլշած կը մնայ, և կ'իմանայ թէ ատենով ինչ զօրաւոր և հարուստ հասարակապետութիւն է եղեր աս տէրութիւնը :

Ակեղեցւոյն յատակագիծն ու ձեւը գծագրողն եղաւ նախ Արնոլֆոս անունով մէկը, որ Փիզայի մայր եկեղեցին, զանգակատունը և Աւերեզմաննոցը տեսած ըլլալով, միտքը դրաւ որ անոնց փառաւորութեր յաղթէ, ժողովուրդն ալ ամենելին ստըկի չէր խընայէր այսպիսի շէնքի մը համար . բայց ինքը շուտով մեռնելով Ճիոթթոյ Աեսփինեան անունով ձարտարապետին յանձնուեցաւ շէնքը, որ Արնոլֆոսի հարած ձակատին շէնքը նոր ձեւ մը գծագրեց աւելի ձոխ ու զարդարուն : Արբոր աս ձակտին շէնքը կէսը հասեր էր 1588ին, Վրանցիսկոս Ագուքսը իր իշխաններուն խօսքին այնպիսի առջինին սքանչելի շէնքը փլցընել տուաւ, որ անոնց հաւնածին պէս շինել տայ . բայց աս ալ առաջ չգնաց . և Լոզմաս Գ գուքսը միայն դրսուանց ծեփով ներկել տուաւ, ժամանակ անցնելէն ետև գոյնզգոյն մարմարիններով դրսի դին պատեցին, անանկ որ արեւը ան փայլուն քարերուն վրայ զարկած ատենը հայլի պէս կը փալփալին : Ակեղեցւոյն ներսի լայնքը 67 գրկաչափ է, երկայնքը 257 : Վրմբէթը խիստ մեծ ու զարմանալի շէնք է, և դասին և երկու կողմնական խո-



րաններուն վրայ շինած է . բարձրութիւնը հռովմայ սուրբ Պետրոսի եկեղեցւոյն գմբեթէն ալ աւելի է : Այս գմբեթին Ճարտարապետն էր Փիլիպ պոս Պլունելեսքոյ անունով մէկը , որիր Ճարտարութեամբը զարմացուց զամբնքը , ու Ճարտարապետութեան կողմանէ Այխելանձելոյէն ալ վար չմնաց : Կը պատմեն փլորենտացիք թէ Այխելանձելոն ալ այնչափ զմայլեր է աս գմբեթին մեծութեանն ու գեղեցկութեանը վրայ որ հռոմայ սուրբ Պետրոսի գմբեթը շինելու համար երթալու ատենը ըսեր է ասոր . “ Արնաս բարով սիրելի . կ'երթամ հռոմ բան մը կը շինեմ որ քեզի նման պիտի ըլլայ , բայց քեզի պիտի չհամնի ” : Այս մայր եկեղեցին կ'ըսուի Առուրբ Աստուածածին ծաղկանց :

Եկեղեցւոյ Ճակտին ճախակողմն է գեղեցիկ ու հռչակաւոր քառակուսի զանգակատունը՝ գոթացի ու գերմանացի խառն Ճարտարապետութեամբ , բարձրութիւնը 250 ոտնաչափ , բոլոր գոյն զգոյն քարերով զարդարած : Այսոր ձեւը Շիոթթոն տուաւ ու իր փորուածքներով զարդարեց : Կարողոս ե կայսրը այնչափ հաւներ էր աս զանգակատան՝ որ առջի տեսնելուն ըսեր է . “ Փլորենտացիք պէտք է որ ասիկայ պահարանի ” մէջ դնեն ու անանկ պահեն ” :

Հոս դրուած պատկերին մէջ մայր եկեղեցիկն զատ՝ կ'երենայ զանգակատունը , և Այկրտարանը՝ որ վեցանկիւնի եկեղեցի մըն է , և ատենով քաղաքին մայր եկեղեցին է եղեր : Խսկ հրապարակին մէջի թափօրը սբ Հաղորդութեան տօնին փառաւոր թափօրն է :

Փլորենտիայի բնակիչները 90,000 կը սեպուին : Լեզունին մաքուր Խտա-

<sup>1</sup> Ճիոթթու աշխարհիս վրայ երեցած կարգէ դուրս մարդիկներէն մէկն է , որ երկրադործ ու հովիտ էր առաջ , ետքը Զիմապուէ անունով երեւի պատկերահանին աշխերս եղաւ , ու քիչ առենի մէջ զանիկայ գերազանցեց :

<sup>2</sup> Գուգակ , սեպում :

Երէն է , բայց հասարակ ժողովրդեան պակասութիւնն է որ գրեթէ ամէն բառի մէջ + ու գ տառերը հոյի պէս թանձր կը հնչէն : Ա աճառականութիւնն ու արհեստները ատենով աւելի ծաղկած էին քան թէ հիմա . բայց հիմայ ալ անուանի են կարծր քարերու վրայ փորուածքները և միւսիննէ շինած նկարքները որ հուղարկան կ'ըսուին : Այս քաղաքս ծնած են շատ երեւի Խտալացիներ . ինչպէս Տանթէ , Փեթրարքա , Պոքքաչիոյ , Պերնի , Կուհիջիարտինի , Այգքիաւելլի , Պալիլոս , Այխելինձելոյ , Ամերիկոս Ա եսփուցի և այլն :

### ԱԶԴԱՑԻՆ ՄԱՏԵՆԱԴՐՈՒԹԻՒՆ

#### Ուանկական երգեր :

Ուաշկական երգը՝ ազգային ոգւոյն մէկ ձայնն է , որ շատ հեղութիւն կողմանէ մեռած կամ մարած ատենն ալ՝ գեռ այսպիսի երգոց մէջ կենդանի կը մնայ . անոր համար ազգային երգ ալ կ'ըսուի , և աս անունովս յիշեր ենք մենք ալ օրագրիս Ատարուոյն 21 թուին մէջ : Ուկ որ աս երկու անուանս մէջ տարբերութիւն կայ , աս է որ ազգային երգը կրնայ վսեմ ոձով ու լեզուով ալ գրուիլ . իսկ ռամկականը գրեթէ միշտ պարզ և ռամիկ լեզուով կը գրուի : Այսպիսի երգերը շատ անգամ աւելի լաւ կ'իմացընեն ազգին հանձարը՝ քան թէ ծանր գրուածքներ . և կը գըտնուին անոնց մէջ անանկ սքանչելի զուրցուածք՝ որ միայն իրենց ռամկական անունին համար հասարակ բան մը կը կարծուին , բայց Ճմարտութք՝ գերագոյն գրուածոց կարգը անցնելու են : Այս գերազանցութեան մեծ և յայտնի պատճառը աս է , որ ասանկ երգեր կամ զուրցուածքներ սրտէ առաջ եկած են , և սիրտը միշտ վարպետ է . իրեն վարպետութիւնը հսս